

(Բամաձևեր, առաջարկներ և կարծիքներ)

Եվրոխորհրդարան

Խորհուրդ

2008թ. ապրիլի 23-ի

Եվրոխորհրդարանի և Խորհուրդի առաջարկները երկարաժամկետ ուսուցանման Եվրոպական Որակավորման Կառուցվածքի ընդունման վերաբերյալ

(Տեքստը՝ ԵՏՏ (Եվրոպական տնտեսական տարածք) չափանիշներին համապատասխան)

(2008/C 111/01)

Եվրոխորհրդարան և Եվրոմիության խորհուրդ

Հաշվի առնելով Եվրոպական Հանրության վերաբերյալ համաձայնագիրը, մասնավորապես 149 և 150 Հոդվածները, ինչպես նաև Հանձնաժողովի առաջարկը, Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեի, Մարգարիտ Կոմիտեի կարծիքը, առաջնորդվելով Համաձայնագրի 251 Հոդվածով՝ նշվում է, որ քաղաքացիների գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացումը շատ կարևոր են Հանրությունում անհատների մրցունակության, զբաղվածության և սոցիալական միասնության զարգացման համար: Այսպիսի զարգացումը պետք է հեշտացնի աշխատողների և ուսանողների միջև միջազգային ակտիվությունը և աջակցի Եվրոպայի աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի համապատասխանեցմանը: Երկարաժամկետ կրթությանը բոլորի (այդ թվում նաև անապահով խավի) մասնակցությունը և որակավորումների օգտագործումը պետք է աջակցվի և բարելավվի ազգային և Հանրային մակարդակներում:

2000թ. Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը եզրակացրեց, որ որակավորումների թափանցիկության աճը պետք է լինի այն կարևոր տարրերից մեկը, որն անհրաժեշտ է Հանրության մեջ կրթության և ուսուցման համակարգի ընդունման համար: Բացի այդ, 2002թ. Բարսելոնայի Եվրոպական Խորհուրդն առաջարկեց համալսարանային սեկտորի ավելի լուրջ համագործակցություն, թափանցիկության և մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում ճանաչողական մեթոդների բարելավում:

Երկարաժամկետ կրթության վերաբերյալ 2002թ. հունիսի 27-ի Խորհուրդի բանաձևը Խորհուրդի և Անդամ երկրների համագործակցությամբ հրավիրեց Հանձնաժողով, որպեսզի զարգացվի կրթական և ուսուցման որակավորումների ճանաչողական շրջանակ՝ հիմնվելով Բոլոնիայի ձեռքբերումների վրա, ինչպես նաև աջակցություն ցուցաբերվի մասնագիտական ուսուցման բնագավառում նմանատիպ գործողություններին:

2004 և 2006թթ. ընդունված «Կրթություն և ուսուցում 2010» ծրագրի իրագործման համար Խորհուրդի և Հանձնաժողովի համատեղ ջանքերի շնորհիվ պահանջ առաջացավ ստեղծելու Եվրոպական Որակավորման Շրջանակ:

Կոպենհագենի գործընթացի համատեքստում 2004թ. նոյեմբերի 15-ին կայացած Խորհուրդի ժամանակ մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում Եվրոպական համագործակցության առաջնահերթ խնդիրների վերաբերյալ Խորհուրդի և Անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչների եզրակացություններն առաջնությունը տվեցին մեկ բաց և ձկուն Եվրոպական Որակավորման Շրջանակի զարգացմանը՝ հիմնված թափանցիկության և փոխադարձ վստահության վրա, որը պետք է լինի մեկ ընդհանուր հղում և կրթության, և ուսուցման համար:

Ոչ պաշտոնական ուսուցման արդյունքների հաստատումը պետք է աջակցվի համաձայն 2004թ. մայիսի 28-ի ոչ պաշտոնական ուսուցման արդյունքների ճանաչման և հաստատման Եվրոպական ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Խորհուրդի եզրակացությունների:

2005թ. մարտի և 2006թ. մարտի Բյուրեղի Եվրոխորհուրդները հատկապես ընդգծեցին Եվրոպական Որակավորման Շրջանակի ընդունման կարևորությունը:

Առաջարկը հաշվի է առնում Եվրոպական Խորհրդարանի և Խորհուրդի 2004թ. դեկտեմբերի 15-ի որակավորումների և կարողությունների թափանցիկության համընդհանուր Հանրային շրջանակի վերաբերյալ No 2241/2004/EC Որոշումը և Եվրոպական Խորհրդարանի և Խորհուրդի 2006թ. դեկտեմբերի 18-ի 2006/962/EC Առաջարկը՝ կապված երկարաժամկետ ուսուցման հիմնական կարողությունների հետ:

Այս Առաջարկը համապատասխանում է Եվրոպական Բարձրագույն Կրթության Բնագավառի շրջանակին, և ցիկլային նկարագրությունները համաձայնեցվել են բարձրագույն կրթության համար 45 Եվրոպական երկրների պատասխանատու նախարարների հետ Բոլոնյան գործընթացի շրջանակներում տեղի ունեցած 2005թ. մայիսի 19 և 20-ին Բերգենի հանդիպման ժամանակ:

2004թ. մայիսի 23-ի և 24-ի Մասնագիտական կրթության և ուսուցման վերաբերյալ Խորհուրդի եզրակացությունները, 2006թ. փետրվարի 15-ի բարձրագույն կրթության և որակի երաշխավորման բնագավառում եվրոպական հետագա համագործակցության վերաբերյալ Եվրոպական Խորհրդարանի և Խորհուրդի 2006/143/EC Առաջարկը, և Բերգենի հանդիպման ժամանակ բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից համաձայնեցված Եվրոպական Բարձրագույն Կրթության Բնագավառում որակի ապահովման ստանդարտները և երաշխիքները ներառում են որակի ապահովման համընդհանուր սկզբունքներ, որոնք պետք է հիմք ստեղծեն Եվրոպական Որակավորման Շրջանակի իրագործման համար:

Այս առաջարկը ոչ մի կապ չունի 2005թ. սեպտեմբերի 7-ի Եվրոպական Խորհրդարանի և Խորհուրդի 2005/36/EC մասնագիտական որակավորումների ձանաչման Հրահանգի հետ, որը իրավունքներ և պարտականություններ է տալիս ինչպես ազգային հեղինակություններին, այնպես էլ գաղթականներին: Հղումը Եվրոպական Որակավորման Շրջանակին չպետք է խանգարի մուտք գործել աշխատաշուկա, որտեղ մասնագիտական որակավորումները ձանաչվել են ըստ 2005/36/EC Հրահանգի:

Այս առաջարկի նպատակն է ստեղծել միասնական հղումների շրջանակ, որը թարգմանիչ կլինի տարբեր որակավորումների համակարգերի և դրանց մակարդակների միջև ինչպես ընդհանուր և բարձրագույն կրթության, այնպես էլ մասնագիտական կրթության և դասավանդման համար: Սա կբարելավվի թափանցիկությունը, համեմատելիությունը և տարբեր Անդամ Երկրների փորձով սահմանված քաղաքացիների որակավորումների հեշտացումը: Որակավորման յուրաքանչյուր մակարդակ պետք է բազմազան կրթական և մասնագիտական եղանակներով լինի հասանելի: Եվրոպական Որակավորման Շրջանակը պետք է միջազգային սեկտորիալ կազմակերպություններին հնարավորություն տա իրենց որակավորումների համակարգերը համապատասխանեցնել Եվրոպական ստանդարտներին՝ այդպիսով ընդգծելով միջազգային սեկտորիալ որակավորումների և ազգային որակավորումների համակարգերի միջև կապը:

Այս առաջարկը նաև օժանդակում է ավելի լայն նպատակների, ինչպիսիք են երկարաժամկետ ուսուցման աջակցումը և աշխատողների ու ուսանողների աշխատունակության, ձկունության և սոցիալական ներգրավման նպաստումը: Որակի երաշխավորման թափանցիկ սկզբունքները և տեղեկատվության փոխանակումը կնպաստեն դրա իրագործմանը՝ ստեղծելով փոխադարձ վստահություն:

Այս առաջարկը պետք է նպաստի կրթական և ուսուցման համակարգերի արդիականացմանը, կրթության, ուսուցման և զբաղվածության միջև փոխադարձ կապին և պաշտոնական ու ոչ պաշտոնական ուսուցումների միջև կապերի ստեղծմանը՝ առաջնորդելով դեպի փորձի միջոցով ձեռք բերված ուսուցման արդյունքների հաստատմանը:

Այս առաջարկը չի փոխարինում կամ սահմանում ազգային որակավորումների համակարգերը և/կամ որակավորումները: Եվրոպական Որակավորման Շրջանակը չի ներկայացնում յուրահատուկ որակավորումներ կամ անհատի կարողությունները, այլ որոշակի որակավորումներ պետք է համապատասխանեցվեն Եվրոպական Որակավորման Շրջանակի համապատասխան մակարդակին՝ կարևորելով ազգային որակավորումների համակարգերը: Այս առաջարկը համապատասխանում է մասնաճյուղային սկզբունքին՝ աջակցելով և լրացնելով Անդամ Երկրների գործողությունները՝ հեշտացնելով նրանց միջև հետագա համագործակցությունը թափանցիկությունը ավելացնելու և ձկունությունն ու երկարաժամկետ ուսուցումը խթանելու ուղղությամբ: Այն պետք է իրագործվի ազգային օրենսդրությանը և փորձին համապատասխան:

Սակայն դեռևս այս առաջարկի նպատակը, այսինքն՝ միասնական հղումների շրջանակի ստեղծումը, որը թարգմանիչ կլինի տարբեր որակավորումների համակարգերի և դրանց մակարդակների միջև, Անդամ Երկրների կողմից ամբողջովին չի իրագործվում նախատեսվող գործողությունների ծավալների և դրանց հետևանքների պատճառով, և ավելի լավ կիրագործվի Հանրային մակարդակում, եթե վերջինս քայլեր ձեռնարկի մասնաձյուղային սկզբունքի համաձայն, ինչպես նշված է Համաձայնագրի 5րդ Հոդվածում: Ըստ այդ Հոդվածում նշված համեմատականության սկզբունքի՝ այս առաջարկը չի գերազանցում այն, ինչն անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար:

Հերթին առաջարկում է, որ Անդամ Երկրները՝

1. Օգտագործեն Եվրոպական Որակավորման Շրջանակը որպես գործիք տարբեր որակավորումների համակարգերում որակավորումների մակարդակը համեմատելու համար, և աջակցեն ինչպես երկարաժամկետ ուսուցման ու գիտելիքների վրա հիմնված հանրության մեջ հավասար հնարավորություններին, այնպես էլ Եվրոպական աշխատաշուկայի հետագա ինտեգրացիային՝ հաշվի առնելով ազգային կրթական համակարգերի բազմազանությունը:
2. Իրենց որակավորումների համակարգերը մինչ 2010թ. համապատասխանեցնեն Եվրոպական Որակավորման Շրջանակին՝ մասնավորապես թափանցիկ ձևով համապատասխանեցնելով իրենց որակավորումների մակարդակը Հավելված 2-ում սահմանված մակարդակներին և ըստ ազգային օրենսդրության և փորձի զարգացնելով ազգային որակավորումների շրջանակները:
3. Ձեռնարկեն այնպիսի քայլեր, որ մինչև 2012թ. համապատասխան ղեկավարների կողմից հաստատված բոլոր նոր որակավորումների վկայականները, դիպլոմները և **“Europass”** փաստաթղթերը ազգային որակավորումների համակարգերի տեսքով պարունակեն պարզ հղում Եվրոպական Որակավորման Շրջանակի համապատասխան մակարդակին:
4. Որակավորումները սահմանելիս և նկարագրելիս օգտագործեն ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցում և աջակցեն պաշտոնական և ոչ պաշտոնական ուսուցման հաստատմանը՝ ըստ Եվրոպական համապատասխան սկզբունքների՝ համաձայնեցված 2004թ. մայիսի 28-ի Խորհուրդի եզրահանգումներում, որտեղ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այն քաղաքացիներին, ովքեր ավելի հավանական է, որ կլինեն գործազուրկներ, որոնց այսպիսի մոտեցումը կարող է օգնել մասնակցել երկարաժամկետ ուսուցմանը և մուտք ունենալ աշխատաշուկա:
5. Աջակցեն և իրագործեն կրթության և դասավանդման մեջ որակի ապահովման սկզբունքները՝ սահմանված Հավելված 3-ում ազգային որակավորումների համակարգերի բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ու ուսուցման որակավորումները համապատասխանեցնելով Եվրոպական Որակավորման Շրջանակին:
6. Սահմանեն ազգային համաձայնության կետերը՝ կցված որոշակի կառույցների և Անդամ Երկրների պահանջներին՝ ավելացնելով որակը և թափանցիկությունը՝ ազգային որակավորումների համակարգերի և Եվրոպական Որակավորման Շրջանակի միջև փոխհարաբերություններն աջակցելու և առաջնորդելու համար:

Այդ ազգային համաձայնության կետերը պետք է ներառեն.

- Ըստ Հավելված 2-ի՝ համապատասխանեցնել ազգային որակավորումների համակարգում որակավորումների մակարդակը Եվրոպական Որակավորման Շրջանակի մակարդակին:
- Երաշխավորել, որ օգտագործվում է ազգային որակավորումների մակարդակը Եվրոպական Որակավորման Շրջանակի մակարդակին համապատասխանեցնելու թափանցիկ մեթոդ՝ մի կողմից նրանց միջև համեմատությունը հեշտացնելու համար, մյուս կողմից, որպեսզի վստահեցվի, որ վերջնական որոշումները հրապարակվում են:
- Ապահովել շահառուների կողմից իրֆորմացիայի ստացումը և կառավարումը, թե ինչպես են ազգային որակավորումները համապատասխանում Եվրոպական Որակավորման Շրջանակին:
- Աջակցել բոլոր կից բաժնետերերի մասնակցությանը՝ ներառյալ ըստ ազգային օրենսդրության և փորձի բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ու դասավանդման ինստիտուտները, սոցիալական գործընկերներին, համեմատական սեկտորներն ու փորձագետներին և նաև աջակցել Եվրոպական մակարդակի որակավորումների օգտագործմանը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝

1. Աջակցել Անդամ Երկրներին իրագործել վերը նշված առաջադրանքները և միջազգային սեկտորիալ կազմակերպություններին՝ օգտագործել համապատասխան մակարդակները և այս Առաջարկում նշված Եվրոպական Որակավորման Շրջանակի սկզբունքները՝ հեշտացնելով համագործակցությունը, փոխանակելով լավ փորձ և թեստավորում-Հանրության ծրագրերի մեջ մտնող *իմիջիայլոց* կամավորական պարզ ակնարկից մինչև պիլոտային ծրագրերը՝ տրամադրելով ինֆորմացիա և խորհրդատվական վարժություններ սոցիալական հանձնաժողովների հետ, նաև զարգացնել աջակցության և առաջնորդման նյութերը:
2. Մինչև 2009թ. ապրիլի 23-ը ստեղծել Եվրոպական Որակավորման Շրջանակի խորհրդատվական խումբ՝ բաղկացած Անդամ Երկրների ներկայացուցիչներից, և ներառյալ Եվրոպական սոցիալական գործընկերներին և այլ շահառուների, որոնք պատասխանատու են ամբողջական կապի տրամադրման և Եվրոպական Որակավորման Շրջանակին որակավորումների համակարգերի համապատասխանեցման համար:
3. Առնչություն ունեցող անձանց հետ համաձայնեցնելուց հետո Անդամ Երկրների հետ համագործակցությամբ գնահատել այս առաջարկին ի պատասխան ձեռք առնված գործողությունը՝ ներառյալ խորհրդատվական խմբի ստեղծումը և գործունեության ժամկետը, և մինչև 2013թ. ապրիլի 23-ը ձեռք բերված փորձի և ապագայի համար ենթադրությունների և, եթե անհրաժեշտ է, Առաջարկի հնարավոր ակնարկի և կրկնության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Եվրոպական Խորհրդարանին և Խորհուրդին:
4. Նպաստել ամուր կապերի ստեղծմանը Եվրոպական Որակավորման Շրջանակի և առկա կամ ապագա Եվրոպական համակարգերի միջև՝ բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության և դասավանդման մեջ կրեդիտային փոխանցումներին և խնայողություններին՝ քաղաքացիների ճկունությունը բարելավելու և ոսումնառության արդյունքների ճանաչումը հեշտացնելու նպատակով:

Ստրասբուրգ, 2008թ. ապրիլի 23

Եվրոպական Խորհրդարանի համար
Նախագահ
Հ.Զ. Պոտերինգ

Խորհուրդի համար
Նախագահ
Զ. Լանարսիս

Հավելված 1

Առաջարկի նպատակների համար օգտագործվող սահմանումներն են.

1. «Որակավորում» նշանակում է գնահատման և հաստատման գործընթացի պաշտոնական արդյունք, որը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ իրավասու մարմինը ընդունում է, որ անձը ձեռք է բերել տրված ստանդարտներին համապատասխան ուսումնառության արդյունքներ:
2. «Ազգային որակավորումների համակարգը» նշանակում է Անդամ երկրների գործողությունների բոլոր կետերը, որոնք վերաբերում են ուսումնառության ճանաչմանը, և այլ մեխանիզմներ, որոնք կրթությունը և ուսուցումը կապում են աշխատանքային շուկայի և քաղաքացիական հասարակության հետ: Սա ներառում է որակի ապահովման, գնահատման և որակավորումների շնորհման կառուցվածքային կարգավորումների և գործընթացների զարգացումը և իրագործումը: Ազգային որակավորումների համակարգը կարող է կազմված լինել մի քանի ենթահամակարգերից և կարող է ներառել ազգային որակավորումների շրջանակ:
3. «Ազգային որակավորումների շրջանակը» նշանակում է ձեռք բերված ուսումնառության որոշակի մակարդակների չափանիշներին համապատասխան որակավորումների դասակարգման մի գործիք, որի նպատակն է ներգրավել և կառավարել ազգային որակավորումների ենթահամակարգերը և բարելավել թափանցիկությունը, հասանելիությունը, առաջընթացը և աշխատանքային շուկայի ու քաղաքացիական հասարակության հետ կապված որակավորումների որակը:
4. «Սեկտոր» նշանակում է մասնագիտական գործողությունների խմբավորում՝ դրանց հիմնական տնտեսական ֆունկցիայի, արտադրանքի, ծառայության կամ տեխնոլոգիայի հիման վրա:
5. «Միջազգային սեկտորիալ կազմակերպություն» նշանակում է ազգային կազմակերպությունների միավորում՝ ներառյալ, օրինակ, ազգային սեկտորների շահերը ներկայացնող աշխատակիցներ և մասնագիտական մարմիններ:
6. «Ուսումնառության արդյունքներ» նշանակում է դրույթներ, թե ուսուցանվողն ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է ի վիճակի անել ուսուցման գործընթացի ավարտից հետո, որոնք սահմանված են գիտելիքների, հմտությունների և կարողությունների ժամկետներում:
7. «Գիտելիք» նշանակում է ուսուցման ժամանակ ինֆորմացիայի յուրացման արդյունքներ: Գիտելիքը փաստերի, սկզբունքների, տեսությունների և պրակտիկաների մարմինն է՝ կապված աշխատանքի կամ ուսումնառության հետ: Եվրոպական Որակավորման Շրջանակի համատեքստում գիտելիքը նկարագրվում է որպես տեսական և/կամ փաստացի:
8. «Հմտություններ» նշանակում է գիտելիքն օգտագործելու ընդունակություն և իմացության օգտագործում՝ առաջադրանքն ավարտելու և պրոբլեմը լուծելու համար: Եվրոպական Որակավորման Շրջանակի համատեքստում հմտությունները նկարագրված են որպես ճանաչողական (ներառում է տրամաբանական, ինտուիտիվ և ստեղծագործական մտածելակերպի օգտագործումը) կամ գործնական (ներառում է ֆիզիկական ձկունություն և մեթոդների, նյութերի և գործիքների օգտագործում):
9. «Կարողություն» նշանակում է աշխատանքային կամ ուսումնական իրավիճակներում և մասնագիտական ու անձնական զարգացման մեջ գիտելիքների, հմտությունների և անձնական, սոցիալական և/կամ մեթոդաբանական ընդունակությունների հաստատված ձիրք: Եվրոպական Որակավորման Շրջանակի համատեքստում կարողությունը նկարագրվում է պատասխանատվության և ինքնավարության սկզբունքներով:

Եվրոպական Որակավորման Շրջանակի մակարդակները սահմանող բնութագրիչներ (ԵՈՇ)

8 մակարդակներից յուրաքանչյուրը սահմանված է բնութագրիչների մի խմբով, որոնք ցույց են տալիս որակավորումների ցանկացած համակարգում այդ մակարդակին համապատասխանող ուսումնառության արդյունքները:

	Գիտելիքներ	Հմտություններ	Կարողություններ
	ԵՈՇ-ի համատեքստում գիտելիքը նկարագրվում է որպես տեսական և/կամ փաստացի	ԵՈՇ-ի համատեքստում հմտությունները նկարագրված են որպես ճանաչողական (ներառում է տրամաբանական, ինտուիտիվ և ստեղծագործական մտածելակերպի օգտագործումը) կամ գործնական (ներառում է ֆիզիկական ձկունություն և մեթոդների, նյութերի և գործիքների օգտագործում)	ԵՈՇ-ի համատեքստում կարողությունը նկարագրվում է պատասխանատվության և ինքնավարության սկզբունքներով
Մակարդակ 1 Մակարդակ 1-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	հիմնարար ընդհանուր գիտելիքներ	հեշտ առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ հիմնարար հմտություններ	կառուցվածքային համատեքստում ուղղակի վերահսկողության տակ աշխատանք կամ ուսուցում
Մակարդակ 2 Մակարդակ 2-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	աշխատանքի կամ ուսումնառության ոլորտում հիմնարար փաստացի գիտելիքներ	հիմնարար ճանաչողական և պրակտիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են համապատասխան ինֆորմացիան օգտագործելիս՝ հասարակ կանոններ և գործիքներ օգտագործելով առաջադրանքները կատարելու և պրոբլեմները լուծելու համար	վերահսկողության տակ որոշակի ինքնավարությամբ աշխատանք կամ ուսումնառություն
Մակարդակ 3 Մակարդակ 3-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	աշխատանքի կամ ուսումնառության ոլորտում փաստերի, սկզբունքների, գործընթացների և ընդհանուր	ճանաչողական և պրակտիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են առաջադրանքները	աշխատանքում կամ ուսումնառության մեջ առաջադրանքները կատարելու պատասխանատվություն վերցնել, ընդունել

	հասկացություններ գիտելիքներ	կատարելիս և պրոբլեմները լուծելիս՝ ընտրելով և կիրառելով հիմնարար մեթոդներ, գործիքներ, նյութեր և ինֆորմացիա	պրոբլեմները լուծելու հանգամանքներին համապատասխան սեփական պահվածք
Մակարդակ 4 Մակարդակ 4-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	աշխատանքի կամ ուսումնառության ոլորտում փաստացի և տեսական գիտելիքներ ավելի լայն համատեքստում	ճանաչողական և պրակտիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքում կամ ուսումնառության մեջ յուրահատուկ պրոբլեմները գտնելու համար	ինքնակառավարման իրականացում աշխատանքի կամ ուսումնառության համատեքստերում, որոնք հաճախ կանխատեսելի են, բայց անհրաժեշտ են մյուսների դժվարությունները վերահսկելու և փոփոխելու, ինչպես նաև աշխատանքի կամ ուսումնառության գործողությունների բարելավման և գնահատման որոշակի պատասխանատվություն կրելու համար
Մակարդակ 5 Մակարդակ 5-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	ամբողջական, մասնագիտացված, փաստացի և տեսական գիտելիքներ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտում և այդ գիտելիքների սահմանների իմացություն	ճանաչողական և պրակտիկ հմտությունների ամբողջություն, որն անհրաժեշտ է աբստրակտ պրոբլեմների ստեղծագործական լուծումներ գարգացնելու համար	իրականացնել կառավարում և վերահսկողություն աշխատանքի կամ ուսումնառության գործողությունների համատեքստերում, որտեղ կա անկանխատեսելի փոփոխություն, քննել և զարգացնել սեփական և ուրիշների գործողությունները
Մակարդակ 6 Մակարդակ 6-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի ավելի խորը գիտելիքներ՝ ներառյալ տեսության և սկզբունքների կրիտիկական հասկացողություն	վարպետություն և նորարարություն ցուցաբերող ավելի խորը հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ ուսումնառության մասնագիտացված ոլորտի խառը և անկանխատեսելի պրոբլեմներ լուծելու համար	կառավարել խառը տեխնիկական և մասնագիտական գործողություններ կամ նախագծեր՝ կրելով պատասխանատվություն անկանխատեսելի աշխատանքի կամ ուսումնառության համատեքստերում որոշումներ կայացնելու համար և անհատների ու խմբերի մասնագիտական

			զարգացումները կառավարելու համար
Մակարդակ 7 Մակարդակ 7-ին համապատասխանող ուսումնառության արդյունքներն են	խիստ մասնագիտացված գիտելիքներ, որոնցից որոշները համարվում են աշխատանքի կամ ուսումնառության ոլորտում առաջնահերթ՝ որպես օրիգինալ մտածողության և/կամ հետազոտության հիմք, ոլորտին և տարբեր ոլորտների միջև սահմաններին վերաբերող գիտելիքների կրիտիկական տեղեկացվածություն	պրոբլեմների լուծման մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են հետազոտության և/կամ նորարարությունների համար, որպեսզի զարգացվեն նոր գիտելիքներ ու գործընթացներ և տարբեր ոլորտներից գիտելիքներ ներգրավվեն	կառավարել և փոփոխել բարդ, անկանխատեսելի և նոր ռազմավարական մոտեցումներ պահանջող աշխատանքը կամ ուսումնառությունը, կրել պատասխանատվություն մասնագիտական գիտելիքները և փորձը աջակցելու համար և/կամ թիմերի ռազմավարական գործողությունները ստուգելու համար
Մակարդակ 8 Մակարդակ 8-ին համապատասխանող ուսումնառությանն արդյունքներն են	աշխատանքի կամ ուսումնառության ոլորտին կամ տարբեր ոլորտների միջև սահմաններին վերաբերող ամենախորը մակարդակի գիտելիքներ	ամենախորը և մասնագիտական հմտություններ և տեխնիկա՝ ներառյալ սինթեզ և գնահատում, որոնք անհրաժեշտ են հետազոտության և/կամ նորարարությունների մեջ կրիտիկական պրոբլեմների լուծման համար, և գոյություն ունեցող գիտելիքների կամ մասնագիտական փորձի ընդլայնում ու վերասահմանում	ցուցաբերել ամուր հեղինակություն, նորարարություն, ինքնավարություն, գիտական և մասնագիտական ներգրավվածություն և նոր մտքերի կամ գործընթացների զարգացման ամուր պատրաստակամություն աշխատանքի կամ ուսումնառության մեջ՝ ներառյալ հետազոտությունը

Հավելված 3

Բարձրագույն կրթության և Մասնագիտական կրթության ու ուսուցման որակի երաշխավորման ընդհանուր սկզբունքները Եվրոպական Որակավորման Շրջանակի համատեքստում

Եվրոպական Որակավորման Շրջանակի իրագործման ժամանակ որակի ապահովումը, որն անհրաժեշտ է բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ու ուսուցման պատասխանատվությունը և բարելավումը երաշխավորելու համար, պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներին համապատասխան.

- Որակի ապահովման բոլոր քաղաքականությունները և գործընթացները պետք է համապատասխանեն Եվրոպական Որակավորման Շրջանակի բոլոր մակարդակներին:
- Որակի ապահովումը պետք է լինի կրթական և ուսուցման ինստիտուտների ամբողջական կառավարման բաղկացուցիչ մասը:
- Որակի ապահովումը պետք է ներառի արտաքին խորհրդատվական մարմինների կամ գործակալությունների կողմից ինստիտուտների, նրանց ծրագրերի կամ նրանց որակի ապահովման համակարգերի կանոնավոր գնահատում:
- Որակի ապահովում իրականացնող արտաքին խորհրդատվական մարմինները կամ գործակալությունները կանոնավոր հաշվետվությունների նյութ պետք է լինեն:
- Որակի ապահովումը պետք է ներառի համատեքստի, ներդրումի, գործընթացի և արտադրության չափման միավորներ՝ շեշտը դնելով արտադրության և ուսումնառության արդյունքների վրա:
- Որակի ապահովման համակարգերը պետք է ներառեն հետևյալ բաղադրիչները.
 - ✓ պարզ և չափելի նպատակներ և ստանդարտներ, իրագործման խորհուրդներ՝ ներառյալ շահառուի մասնակցությունը
 - ✓ համապատասխան ռեսուրսներ
 - ✓ գնահատման կայուն մեթոդներ՝ ներառյալ ինքնագնահատում և արտաքին ստուգում
 - ✓ հետադարձ կապի մեխանիզմներ և բարելավման գործընթացներ
 - ✓ բոլորին հասանելի գնահատման արդյունքներ
- Որակի ապահովման նախաձեռնությունները միջազգային, ազգային և ռեգիոնալ մակարդակներում պետք է լինեն համաձայնեցված՝ ստուգումը, կապը, համատեղ գործունեությունը և ողջ համակարգի քննումը երաշխավորելու համար:
- Որակի ապահովումը պետք է լինի համագործական գործընթաց կրթության և ուսուցման մակարդակների և համակարգերի միջև՝ ներառյալ Անդամ երկրների և Հանրության շրջանակներում բոլոր շահառուներին:
- Որակի ապահովման ուղղությունները Հանրային մակարդակում կարող են տրամադրել հղման կետեր գնահատումների և հավասար ուսուցման համար: